Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2019 թվականին ԱՀ ֆինանսների նախարարության կատարած աշխատանքների վերաբերյալ

- **Ֆինանսական ոլորտ**

2019 թվականի պետական բյուջեի սեփական եկամուտները կազմել են 60 մլրդ 141.6 մլն դրամ՝ ապահովելով պլանային առաջադրանքի 100.8 տոկոսը կամ պլանավորված ցուցանիշից ավել 461.5 մլն դրամով: 2018 թվականի համեմատ ավել է հավաքագրվել ավելի քան 5 մլրդ 859.0 մլն դրամ:

2019 թվականին հարկային եկամուտների և պետական տուրքի գծով բյուջե է մուտքագրվել 59 մլրդ 231.8 մլն դրամ՝ պլանավորված 58 մլրդ 794.7 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 0.7 տոկոսով կամ 437.1 մլն դրամով: Նախորդ տարվա համեմատ հարկային եկամուտների և պետական տուրքի գծով մուտքերն աճել են 10.7 տոկոսով կամ ավել 5 մլրդ 709.3 մլն դրամով, որից 308.9 մլն դրամը ապահովվել է «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ հաշվին, իսկ մնացած 5 մլրդ 400.0 մլն դրամը ապահովվել է տնտեսության այլ ճյուղերում գործունեություն իրականացնող հարկ վճարողների հաշվին, որը աննախադեպ ցուցանիշ է մեր երկրի համար: Այլ ճյուղերի հաշվին ավել հավաքագրման այսպիսի ցուցանիշ երբևիցե չի արձանագրվել, ինչը վերջին տարիներին տնտեսության դիվերսիֆիկացման ուղղությամբ կառավարության կողմից տարվող հետևողական աշխատանքների, տնտեսական աճի և հարկային մարմնի կողմից իրականացվող հետևողական վարչարարության արդյունք է: Հավաքագրված հարկային եկամուտների և պետական տուրքի գումարների մոտ 79 տոկոսը ապահովվել է խոշոր հարկ վճարողների հաշվին:

Հայաստանի Հանրապետությունից ստացված բյուջետային վարկը կազմել է 57 մլրդ 847.0 մլն դրամ՝ 2018 թվականի 51 մլրդ 428.2 մլն դրամի դիմաց:

2019 թվականի պետական բյուջեի փաստացի ծախսերը կազմել են 113 մլրդ 330.8 մլն դրամ՝ ապահովելով նախատեսված ծրագրի 97.3 տոկոսը՝ 2018 թվականի 97.1 տոկոսի դիմաց: Ծախսերի աճը 2018 թվականի նկատմամբ կազմել է 8.7 մլրդ դրամ:

2019 թվականի պետական բյուջեն կատարվել է առանց ծախսերի գծով ընթացիկ պարտքերի կուտակման: Պետական բյուջեի կատարման ընթացքում մեզ հաջողվել է ամբողջ ծավալով ֆինանսավորել աշխատավարձերը, թոշակները, նպաստներն ու սոցիալական բնույթի այլ ծախսերը, ինչպես նաև կրթության, առողջապահության, մշակույթի և տնտեսական ոլորտի բոլոր ծրագրերը:

Արցախի Հանրապետության Ընդերքի մասին օրենսգրքում և «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» օրենքում կատարված փոփոխություններով պայմանավորված՝ Արցախի Հանրապետության 2019 թվականի պետական բյուջեով ծրագրված հարկային եկամուտների պլանային առաջադրանքը տարվա ընթացքում ավելացվել է 4.0 մլրդ դրամով, որն ամբողջությամբ ուղղվել է կապիտալ ներդրումների ծրագրի իրականացմանը:

Պետական բյուջեից իրականացվող ծախսերի արդյունավետությունն ու թափանցիկությունը բարձրացնելու նպատակով 2019 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ են մտել «Գանձապետական համակարգի մասին» օրենքում իրականացված փոփոխությունները, համաձայն որոնց բոլոր այն պետական ոչ առևտրային կազմակերպությունների հաշիվները, որոնք գտնվում են առևտրային

բանկերում, տեղափոխվել են գանձապետական համակարգ, և նրանց նկատմամբ կիրառվում են բյուջետային հիմնարկների հաշիվների համար սահմանված նախնական հսկողության նույն ընթացակարգերը, ինչը թույլ է տալիս մեզ ավելի արդյունավետ կառավարել պետական բյուջեի ֆինանսական միջոցները:

Գանձապետական համակարգի գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով 2019 թվականին շարունակվել են «CLIENT-TREASURY» գանձապետական էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման աշխատանքները, որոնց արդյունքում ևս 19 պետական մարմիններում ներդրվել է նշված համակարգը: 2020 թվականին նախատեսվում է ավարտին հասցնել բոլոր պետական մարմիններում «CLIENT-TREASURY» համակարգի ներդրման աշխատանքները:

Ծրագրային բյուջետավորման բարեփոխումների շրջանակում 2019 թվականին առաջին անգամ փորձնական տարբերակով ծրագրային բյուջետավորման ձևաչափով նախատեսվել է գյուղատնտեսության երեք ծախսային ծրագիր: Այս տարի ևս երեք ծրագիր առողջապահության ոլորտում նախատեսված է իրականացնել ծրագրային բյուջետավորման ձևաչափով. դրանք են՝ «Կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռքբերում», «Հանրապետությունից դուրս բուժման ուղեգրված հիվանդների ծախսերի փոխհատուցում» և «Անգիոգրաֆիայի անցկացման ծառայություններ» ծախսային ծրագրերը, որը հնարավորություն կտա գնահատել այդ ծրագրերի արդյունավետությունը և հետագա տարիներին դրանց շարունակականությունն ապահովելու նպատակահարմարությունը:

Աստիճանաբար անցնելով ծրագրային բյուջետավորման ձևաչափին՝ մեր նպատակն է բարձրացնել բյուջետային միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի արդյունավետությունը, որը հնարավորություն է տալու ներկայացնել ոչ միայն ֆինանսական, այլ նաև արդյունքային ցուցանիշները, որոնք իրենց հերթին թույլ կտան գնահատել ծրագրի հասցեականությունն ու արդյունավետությունը:

2019 թվականի ընթացքում փոփոխություններ են կատարվել նաև պետական գնումների գործընթացի կազմակերպման կարգում, որը հիմնականում պայմանավորված է գնման գործընթացների շրջանակներում վերհանված խնդիրների կանոնակարգման ու գնումների կազմակերպման թափանցիկության, մրցունակության և արդյունավետության բարձրացման անհրաժեշտությամբ:

Պետական գնումների ոլորտում արդյունավետության և թափանցիկության մակարդակի, ինչպես նաև մրցակցության բարձրացման նպատակով 2020 թվականին կշարունակվեն գնումների համակարգի բարեփոխումները, մասնավորապես՝ նախատեսվում է ներդնել գնումների կազմակերպման էլեկտրոնային համակարգը:

Պետական բյուջեից իրականացվող ֆինանսավորումների նպատակայնությունն ու արդյունավետությունը վերահսկելու նպատակով ֆինանսական վերահսկողության տեսչության կողմից 2019 թվականին լրիվ կամ մասնակի ստուգումներ են իրականացվել հանրապետության տարածքում գործող 98 տնտեսավարող սուբյեկտների մոտ և բյուջետային հիմնարկներում:

Ստուգումների արդյունքներով հայտնաբերվել և լրացուցիչ հաշվարկվել են 371.5 մլն դրամի առանց հիմնավորման ծախսումներ, ինչպես նաև ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների պակասորդ, այդ թվում՝ պետական բյուջե լրացուցիչ հաշվարկված գումարները կազմել են 109.6 մլն դրամ, համայնքային բյուջեներ՝ 6.8 մլն դրամ, ձեռնարկության հաշվին վերականգնման ենթակա գումարները՝ 1.8 մլն դրամ և հաշվառումով վերաձևակերպման ենթակա գումարները՝ 253.3 մլն դրամ:

Ստուգումների արդյունքներով 8 կազմակերպության նյութեր ուղարկվել են Ոստիկանություն, 2-ը՝ Գլխավոր դատախազություն և 4-ը՝ Քննչական կոմիտե:

Աշխատանքների կազմակերպման ընթացքում նախարարությունը սերտ համագործակցություն է ծավալել Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի, ֆինանսների նախարարության և պետական եկամուտների կոմիտեի հետ: Պարբերաբար կազմակերպվել են ղեկավար կազմի և մասնագետների փոխադարձ այցելություններ, քննարկումներ իրականացվել Արցախի Հանրապետությունում կուտակային կենսաթոշակային համակարգի ներդրման, Արցախի տնտեսավարող սուբյեկտների կողմից ՀՀ մաքսային սահմանով իրականացվող ներմուծումների և արտահանումների ընթացակարգերի պարզեցման ու հստակեցման, Հայաստանի և Արցախի տնտեսավարող սուբյեկտների միջև կատարվող գործարքների մասով դուրս գրվող հարկային հաշիվների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման միասնական հարթակի ներդրման և մի շարք այլ հարցերի շուրջ:

Հաշվետու տարում Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի տեղեկատվական տեխնոլոգիաների վարչության հետ համատեղ կազմակերպվել է միջոցառում, որի ընթացքում երկուստեք ներկայացվել են շնորհանդեսներ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում ունեցած ձեռքբերումների վերաբերյալ, քննարկվել ոլորտի համաշխարհային միտումներին զուգընթաց ժամանակակից համակարգերի ներդրմանն ու գործընթացների ավտոմատացմանը վերաբերող հարցեր, որոնց կիրառմամբ հարկ վճարողներին մատուցվող ծառայությունները կդառնան ավելի մատչելի և հասցեական:

Համակարգի 1 աշխատակից մասնակցել է OECD միջազգային կազմակերպության կողմից Սլովենիայի մայրաքաղաք Լյուբլյանայում կազմակերպված ուսումնական դասընթացին, 14 աշխատակից մասնակցել են Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի ուսումնական կենտրոնի կողմից կազմակերպված վերապատրաստման դասընթացներին, ևս 5 աշխատակից մասնակցել են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից կազմակերպված գնումների համակարգողների շարունակական մասնագիտական վերապատրաստման դասընթացներին:

Հուլիս ամսվա ընթացքում Հայաստանի Հանրապետության աուդիտորների և հաշվապահների ասոցիացիայի հետ համատեղ հաշվապահական և հարկային հաշվառման թեմաներով կազմակերպվել են սեմինար-դասընթացներ, որոնց մասնակցել են մասնավոր հատվածում գործունեություն իրականացնող կազմակերպությունների ու 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ բաժնետիրական ընկերությունների շուրջ 70 հաշվապահներ:

2019 թվականին հաշվապահական հաշվառման ոլորտում շարունակվել են հանրային հատվածի կազմակերպությունների՝ հաշվապահական հաշվառման նոր համակարգին անցման աշխատանքները:

Տարվա ընթացքում նոր համակարգին անցնող հանրային հատվածի 227 կազմակերպությունների հաշվապահների համար կազմակերպվել են սեմինարներ, որոնց ընթացքում մեկնաբանվել են հանրային հատվածի հաշվապահական հաշվառման քաղաքականության օրինակելի մոդելը, գույքագրման կարգը և մուտքի հաշվեկշիռը կազմելու համար հիմք ընդունվող ակտիվների և պարտավորությունների գնահատման կարգը:

2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ վերապատրաստում են անցել թվով 209 հաշվապահ, որոնցից 43-ը ստացել են հանրային հատվածի հաշվապահի որակավորում:

Այս տարի շարունակվելու են հանրային հատվածի հաշվապահական հաշվառման միջազգային չափանիշներին համապատասխանող համակարգի ներդրման աշխատանքները, որը հնարավորություն կընձեռի ստանալ պետական մարմինների առանձին և համախմբված ֆինանսական հաշվետվությունները:

- **Հարկային ոլորտ**

- ***Հսկողական գործընթացների մասով***

2019 թվականին հարկային մարմնի կողմից իրականացվել են պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 218 ստուգում, որոնց արդյունքում հաշվարկվել են 1 մլրդ 203.5 մլն դրամ լրացուցիչ հարկային պարտավորություններ: «Հարկային համակարգի բարեփոխումների» հայեցակարգի համաձայն՝ ստվերային շրջանառությունների դեմ պայքարի շրջանակներում արձանագրվել են վարձու աշխատողների չձևակերպման, հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնների խախտման, ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների թերհայտարարագրման, պակասորդի հայտնաբերման, ձեռնարկատիրական գործունեության առարկաների չգրանցման և ապօրինի ձեռնարկատիրական գործունեության իրականացման թվով 141 իրավախախտումների դեպքեր, որոնցով առաջադրվել են 16.8 մլն դրամի չափով պարտավորություններ:

Կամերալ հսկողության շրջանակներում իրականացվել են հարկ վճարողների 11203 հաշվարկ-հաշվետվությունների ուսումնասիրություններ, որոնց արդյունքում 3646 խախտումների մասով հարկ վճարողներին առաջարկվել է կատարել ճշտումներ՝ զերծ մնալով հետագա ստուգումներով առաջադրվելիք լրացուցիչ տույժերից և տուգանքներից:

Հաշվետու տարում Արցախի Հանրապետության տարածք ապրանքանյութական արժեքների ներմուծման ծավալները կազմել են 144 մլրդ 777.6 մլն դրամ՝ նախորդ տարվա 125 մլրդ 614.3 մլն դրամի դիմաց: Նույն ժամանակահատվածում արտահանման ծավալները կազմել են 122 մլրդ 750.8 մլն դրամ՝ նախորդ տարվա 102 մլրդ 633.9 մլն դրամի դիմաց:

Զգալի աշխատանքներ են տարվել նաև հարկ վճարողների կուտակած պարտավորությունների նվազեցման ուղղությամբ: Այս առումով կարևոր նշանակություն է ունեցել «Հարկային և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին» օրենքը: Թվով 1930 հարկ վճարողների հետ կնքվել են պարտավորությունների մարման 12-ամսյա և 24-ամսյա տևողությամբ ժամանակացույցեր, որոնց համաձայն 2019 թվականի ընթացքում վերջիններիս կողմից մարվել են 16 մլրդ 964.6 մլն դրամի պարտավորություններ, այդ թվում՝ կնքված ժամանակացույցերի գումարներից՝ 1 մլրդ 527.8 մլն դրամ, որի արդյունքում 628 հարկ վճարողներ ազատվել են շուրջ 800.0 մլն դրամի տույժերի և տուգանքների վճարումից:

Պարտավորություններ կուտակած հարկ վճարողներին պարբերաբար ներկայացվել են նաև ծանուցումներ, իրականացվել վճարունակության ուսումնասիրություններ, կիրառվել արգելադրումներ, ներկայացվել դատական հայցեր:

Ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել թվով 61 հայց՝ 253.3 մլն դրամ հայցապահանջի գումարով: Ներկայացված հայցերի մասով (այդ թվում՝ նախորդ տարիների մասով) դատական մարմինների կողմից հաշվետու տարում կայացվել է 29 վճիռ՝ 386.3 մլն դրամ ընդհանուր գումարով:

Հիպոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման գործընթացի շրջանակներում պետական բյուջեից կատարվել է վերադարձ 328 վարձու աշխատողների՝ 178 մլն դրամի չափով: Ընդհանուր առմամբ 2015 թվականի ապրիլի 1-ից սկսած նշված ծրագրից օգտվել են 412 վարկառուներ՝ ստանալով 610 մլն դրամի չափով եկամտային հարկի վերադարձ:

Գործունեությունը նոր սկսող 484 հարկ վճարողների տրամադրվել են եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով հավաստագրեր:

- **Օրենսդրական և ենթաօրենսդրական դրույթների կատարելագործում**

2019 թվականին հարկային մարմնի առաջնահերթությունների շարքում էր հարկային օրենսդրության կատարելագործումը: Այդ նպատակով մշակվել և Կառավարության ու Ազգային Ժողովի քննարկմանն են ներկայացվել օրենսդրական փոփոխությունների երկու փաթեթ:

Օրենսդրական փոփոխությունների առաջին փաթեթով 2019 թվականի հուլիսի 1-ից ներդրվել է հարկային հաշիվների դուրս գրման էլեկտրոնային համակարգը, ինչի արդյունքում էապես կրճատվել են հարկ վճարողների կողմից դուրս գրվող հարկային հաշիվներում սխալներ կատարելու հավանականությունը, թղթային տարբերակով հարկային մարմին ներկայացվող տեղեկատվության ծավալը, ինչպես նաև օրենսդրական հիմքեր ստեղծվել հարկային հաշիվների շրջանառության նկատմամբ հարկային մարմնի կողմից հսկողական նոր գործիքակազմ կիրառելու համար: Օրենքի շրջանակներում 2019 թվականի հուլիսի 1-ից մինչև 2020 թվականի հունվարի 1-ը հարկ վճարողների կողմից էլեկտրոնային եղանակով դուրս են գրվել ավելի քան 200000 հարկային հաշիվներ, որոնք անմիջականորեն արտացոլվել են հարկային մարմնի տեղեկատվական բազայում, և կատարվել համապատասխան մշակումներ:

Օրենսդրական մյուս փաթեթով հանրապետությունում ներդրվել է կուտակային կենսաթոշակային համակարգը, որի նպատակն է պատշաճ կենսաթոշակ ապահովել կենսաթոշակառուների համար՝ կենսաթոշակային համակարգը դարձնելով ֆինանսապես կայուն և ապահովելով ուղղակի կապ անձի եկամուտների և կենսաթոշակի չափի միջև: Զուգահեռաբար մեկ տոկոսային կետով նվազեցվել է եկամտային հարկի դրույքաչափը՝ սահմանվելով 20 տոկոս: Օրենքի համաձայն՝ կուտակային հատկացումները ձևավորվում են մասնակցի կողմից կատարվող սոցիալական վճարներից, որը կազմում է իր ամսական եկամտի 2.5 տոկոսը, և պետական բյուջեից հատկացվող լրացուցիչ միջոցներից՝ 7.5 տոկոսի չափով:

Գործընթացի շրջանակներում 2019 թվականի հուլիս-դեկտեմբեր ամիսների ընթացքում մշակվել են կուտակային բաղադրիչի շուրջ 22000 մասնակիցների տվյալներ, և նրանց անհատական կենսաթոշակային հաշիվներին փոխանցվել 1 մլրդ 323.4 մլն դրամ կուտակային հատկացումներ, որից 333.9 մլն դրամը մասնակիցների կողմից վճարված սոցիալական վճարներն են, իսկ 989.5 մլն դրամը՝ Արցախի Հանրապետության պետական բյուջեից հատկացված միջոցները:

Հաշվետու տարում մեկնարկել են Հարկային օրենսգրքի մշակման աշխատանքները: Այդ նպատակով համակարգում ձևավորվել է աշխատանքային խումբ, հարկ վճարողներից և այլ շահագրգիռ անձանցից հավաքագրվել գործարար միջավայրի բարելավման մասով առաջարկություններ: Այս մասով առաջիկայում նախատեսում ենք կազմակերպել հանրային լայն քննարկումներ:

- **Հանրային իրազեկման աշխատանքներ**

Հաջորդ ուղղությունը հարկատու-հարկային մարմին փոխհարաբերման դաշտի բարելավումն է. 2019 թվականի ընթացքում շարունակական աշխատանքներ ենք իրականացրել հարկային մարմնի ու հարկ վճարողների փոխհարաբերությունների կատարելագործման և հանրային իրազեկման աշխատանքների ընդլայնման ուղղությամբ: Հարկային մարմնի կողմից հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների միօրինակությունն ու միասնականությունն ապահովելու և դրանց որակը բարձրացնելու նպատակով հաստատվել են հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների միասնական ստանդարտը և մատուցվող ծառայությունների տեսակները, իրականացման ժամկետներն ու տրամադրման ձևերը:

Պարբերաբար կազմակերպվել են իրազեկման հանդիպումներ, անցկացվել ուսուցողական սեմինարներ: Մասնավորապես, 2019 թվականի հունվար և հունիս ամիսների ընթացքում Հանրապետության բոլոր շրջաններում և Ստեփանակերտ քաղաքում կազմակերպվել են 14 սեմինար-խորհրդակցություններ, որոնց մասնակցել են 1438 հարկ վճարողներ:

Տարվա ընթացքում նոր ստեղծված 118 հարկ վճարողների մոտ կատարվել են այցելություններ և տեղում պարզաբանվել օրենսդրական դրույթները:

Հանրային իրազեկման աշխատանքներ են իրականացվել նաև նախարարության պաշտոնական կայքէջերի, թեժ գծի, սկայպ հեռաձայնային ծառայության միջոցով:

Փոխվստահության հիմքով՝ հարկ վճարող-հարկային մարմին հարաբերման դաշտի բարելավման նպատակով, ընտրվել և գործարկվել են երկխոսության նոր միջոցներ: Այս առումով հատկապես կարևորվում է e-taxpayer բջջային հավելվածի գործարկումը, որը թույլ է տալիս ծանոթանալ հարկային օրենսդրական և ենթաօրենսդրական նորություններին, ստանալ ծանուցումներ հարկային մարմին հանձնված հաշվետվությունների, վճարած հարկերի, ստացված հարկային հաշիվների և հանրապետության տարածք ապրանքանյութական արժեքների ներմուծումների գործարքների վերաբերյալ: Բջջային հավելվածի միջոցով նաև հնարավոր է ուղարկել դիմումներ՝ գործունեության սկսման, դադարեցման, պարտավորությունների առկայության վերաբերյալ, ինչպես նաև հարկային օրենսդրության այս կամ այն հարցի շուրջ պարզաբանումներ ստանալու նպատակով:

Հարկերի ինքնուրույն հաշվարկման ու վճարման մշակույթն ամրապնդելու նպատակով 124 կարգապահ հարկ վճարողների տրամադրվել են «Օրինապահ հարկ վճարողի» հավաստագրեր:

- **Համակարգի արդիականացում**

Եվ վերջին ուղղությունը, որը էական նշանակություն ունի մեր կողմից կատարվող աշխատանքներում, դա համակարգի արդիականացումն ու տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումն է, ինչը հնարավորություն է տալիս հարկ վճարողներին մատուցել ժամանակակից տեխնոլոգիաների վրա հիմնված ծառայություններ՝ ապահովելով համակարգի կողմից իրականացվող աշխատանքների արդյունավետությունն ու թափանցիկությունը:

2019 թվականի հուլիսի 1-ից կատարված օրենսդրական փոփոխություններին համապատասխան՝ ներդրվել են էլեկտրոնային հարկային հաշիվների դուրս գրման և սոցիալական վճարների անձնավորված հաշվառման համակարգերը, ընդլայնվել հարկային հաշվետվությունների էլեկտրոնային ներկայացման ու հարկային պարտավորությունների ավտոմատ հաշվառման համակարգերի շրջանակները:

Կուտակային կենսաթոշակային համակարգի թափանցիկության ապահովման ու մասնակիցների տեղեկացվածության բարձրացման նպատակով գործարկվել է «Արցախի կուտակային կենսաթոշակային համակարգի մասնակցի անհատական հաշիվ» համակարգը, որի միջոցով քաղաքացիները կարող են տեղեկանալ իրենց կուտակային հատկացումների ճիշտ և ժամանակին փոխանցմանն ու կառավարման արդյունավետությանը: Դեկտեմբեր ամսում հնարավորություն է ստեղծվել կենսաթոշակային հաշիվները ստուգել նաև «Արցախբանկ» ՓԲԸ-ի բանկոմատների միջոցով, որոնցով հնարավոր է ստանալ անհատական կենսաթոշակային հաշվի մնացորդի, ինչպես նաև հաշվով կատարված վերջին 10 գործառնությունների պատմությունը:

Առաջիկա օրերին կգործարկվի նաև պետական վճարումների online կատարման համակարգը՝ այդպիսով կրճատելով դրանց վճարման համար ծախսվող ժամանակն ու ապահովելով ֆինանսական հոսքերի թափանցիկությունը:

2020 թվականի հունվարի 1-ի դրությամբ բոլոր հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման ենթահամակարգից օգտվողների թիվը կազմում է 3170 հարկ վճարող,

որը կազմում է հաշվետվություն ներկայացնող հարկ վճարողների շուրջ 70 տոկոսը: Ընդ որում, ավելի քան 2530 հարկ վճարող կամ 80 տոկոսը կամավոր հիմունքներով է միացել հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգին:

2019 թվականին զգալի ուշադրություն է դարձվել նաև հարկային ծառայողների ուսուցման աշխատանքներին: Այդ առումով տարվա ընթացքում կենտրոնական ապարատի մասնագետների կողմից պարբերաբար կազմակերպվել են ուսուցողական դասընթացներ՝ օրենսդրական փոփոխությունների, հարկային հաշիվների էլեկտրոնային եղանակով դուրս գրման և սոցիալական վճարների անձնավորված հաշվառման համակարգերի հետ աշխատանքների կազմակերպման թեմաներով:

Տարվա ընթացքում կազմակերպվել են նաև 2 մրցույթներ, այդ թվում՝ կրկնակի, որոնց արդյունքում համակարգը համալրվել է 3 նոր հարկային ծառայողներով:

- **2020 թվականի պետական բյուջեի ցուցանիշների մասին տեղեկատվություն**

Բյուջեի **սեփական եկամուտները** ծրագրվել են 56.0 մլրդ դրամի չափով, որից **հարկային եկամուտները և պետական տուրքերը** կազմում են 55.5 մլրդ դրամ: «Հարկեր/ՀՆԱ» հարաբերակցությունը կկազմի շուրջ 15 տոկոս: Ընդհանուր առմամբ, ըստ կանխատեսումների, հարկային եկամուտների ավելի քան 77 տոկոսը կապահովվի խոշոր հարկ վճարողների հաշվին:

Միջպետական վարկի չափը 2020 թվականին կազմում է 64.9 մլրդ դրամ:

2019 թվականի պետական բյուջեն պլանավորվել է **պրոֆիցիտով**՝ 108.7 մլն դրամի չափով:

Պետական բյուջեի ծախսերը նախատեսվել են 120.8 մլրդ դրամի չափով՝ ապահովելով 5.6 տոկոս աճ: ՀՆԱ-ում ծախսերի մակարդակը կկազմի 32.2 տոկոս՝ նախորդ տարվա 33.6 տոկոսի դիմաց:

Այս տարվա բյուջեն ևս ունի սոցիալական ուղղվածություն և բոլոր այն հիմնական փոփոխությունները, որոնք կատարվել են 2020 թվականի պետական բյուջեում, կրում են սոցիալական բնույթ, մասնավորապես.

ա. հունվարի 1-ից հանրապետությունում բարձրացվել է նվազագույն ամսական աշխատավարձը, որը կազմում է 68000 դրամ՝ մինչ այդ գործող 55000 դրամի փոխարեն: Նվազագույն ամսական աշխատավարձի բարձրացմամբ պայմանավորված ավելացել է պետական և համայնքային բյուջեների միջոցներից ֆինանսավորվող շուրջ 6500 վարձու աշխատողների աշխատավարձերը, որի համար պետական բյուջեից լրացուցիչ հատկացվել է 1 մլրդ 55.6 մլն դրամ, իսկ ընդհանուր առմամբ նվազագույն աշխատավարձի բարձրացումը՝ ներառյալ մասնավոր հատվածը, ընդգրկում է շուրջ 15000 վարձու աշխատող, որոնց հավելյալ ստացվելիք եկամուտը տարվա կտրվածքով կկազմի ավելի քան 2.5 մլրդ դրամ,

բ. հունվարի 1-ից կենսաթոշակները միջինում բարձրացվել են 10 տոկոսով, որով պայմանավորված կավելանա ավելի քան 23500 թոշակառուի կենսաթոշակի չափը, որի համար պետական բյուջեից լրացուցիչ նախատեսվել է հատկացնել 1 մլրդ 195.7 մլն դրամ,

գ. հունվարի 1-ից հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատող մանկավարժների միջին ամսական հաշվարկային աշխատավարձերը բարձրացվել են 10 տոկոսով, որի համար լրացուցիչ հատկացվել է մոտ 700.0 մլն դրամ: Շուրջ 3600 մանկավարժական դրույքների միջին ամսական հաշվարկային աշխատավարձը մեկ դրույքի հաշվով կկազմի 161.7 հազ. դրամ՝ ներառյալ լրացուցիչ վարձատրությունները: